

հովանանայր հանուրց, եւ ոչ ոք իշխէր ճիկ հանել ընդդէմ նորա, այլ եւ խաղաղեալ սերտէին՝ ինա, ահարկու գոլով հզօրաց հպարտից, սիրարկու հեզոց եւ տկարաց²⁴¹. եւ զօրացեալ բարձրանայր թագաւորութիւնն՝ ցորչափ երկարեաց նա զկեանսն,՝ իզօրութեան եւ՝ ի փառս, որպէս յաւուրս Լեւոնի. եւ ըստ երկարամեայ թագաւորութեանն՝ առաւել եւս տարածեցաւ եւ ծանօթացաւ ընդ հեռաւոր աշխարհս՝ անուն Հեթմոյ, «գովեալ եւ հռչակեալ յամենայն ազգաց եւ՝ ի հանուրց բերանոյ», ըստ բանից ժամանակակից յիշատակագրի:

Ե. Վերատեսութիւն ՚ի Լեւոն

Զայս օրինակ կատարումն էա՝ եթէ ոչ բան կտակի, այլ զօրութիւն նորին եւ ուխտ սրտին Լեւոնի. այսպէս՝ իզուիս եհան Լեւոն՝ զգործն մեծ, ոչ յանձին իւրում աւարտեալ եւ զրաւեալ, այլ իբրեւ հիմն հաստատուն զինքն դնելով՝ եւ՝ ի վերայ ամբառնալով զթագաւորութիւնն Հայոց, որ բաւեաց յետ իւր դար եւ կէս, յերկարատեւ քան զամենայն պետութիւնս քրիստոնէից հաստատելոց յաւուրս Խաչակրաց յարեւելս, (բաց՝ իմիայնոյ՝ ՚ի կղզիացեալն Կիպրոսէ). որոյ ամենայն փառք եւ մեծութիւն եւ զարմանալի տեւողութիւն՝ արգասիք են արդեանց Լեւոնի. սկսեալ, որպէս օրէն է ասել զործակցութեամբն՝ յօրէ պայագատութեան եղբօր իւրոյ Ռուբինի՝ յամի 1175, ցամն 1375, լի բովանդակ 200 ամ:

Ի յուշ ածելով արդ միանգամայն զոր անձամբն արար Լեւոն եւ զոր ետ առնել յետամնացիցն եւ յետագայից, անմարթ համարիմ խոհական մտաց եւ գիտակաց անցից պատմութեան՝ չխոստովանել, եթէ արդարեւ մեծ ուն եղել նա, եւ զործեաց զործ մի մեծ, որպիսի թերեւս ոչ ոք յայնմ

²⁴¹ Յաւուրս ծերութեան նորա գրէր զնմանէ գորովաբար զյետագայ բանքս, երեց ուն նշանաւոր անուամբ եւ յաւէտ մականուամբ, եւ արժանի հետաքննութեան զարմին, ՚ի ժամանակի՝ յորում զրաւեալ համարիւր Ռուբինեանցն. եւ ՚ի կարծիս լինիմ թէ իցէ արդէօք թոռն կամ թոռնորդի Մլէհի ՚ի հարձորդոյն: Իսկ բանքն են այս, զոր գրէ ՚ի յիշատակարանս Աստուածաշունչ գրոց, վասն Յովի. եպիսկոպոսի՝ որդւոյն Կոստանդինի. «Ո՛վ սուրբ եղբարք... յիշեսցիք յաղօթս ձեր զստացող գրոցս, զիմ քաղցր եւ բարի Պարոնն եւ զիշխանաց իշխանն, զՊարոն Կոստանդին, զհեզն եւ զխոնարհն, զաստուածասէրն եւ զքահանայասէրն եւ եկեղեցասէրն, զի Քրիստոս Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ առողջ հոգւով եւ մարմնով... Ընդ նմին եւ զմեղաւոր երեցս զգծող ցանկերոյս՝ զԹորոս Ըռաւրիսեանցս, եւ զծնողսն մեր յիշեսցիք Աստուած – ողորմեայիւ, եւ Աստուած յիշողացդ եւ մեզ ողորմեացի», եւ այլն: